ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 17

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳ.

1.Արաքսավան համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին

2.Արաքսավան համայնքի ղեկավարի 2017թվականի աշխատավարձի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին

3.Արաքսավան համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների մասին

4.Արաքսավան համայնքի 2016թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

4. ՊՈՂՈՏԱՆՅԱՆ ԱՐԱ

5. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 18

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ընդունել Արաքսավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ
5. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 19

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արաքսավան համայնքի ղեկավարի 2017 թվականի աշխատավարձի չափը համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ
5. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 20

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արաքսավան համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ
5. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 21

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և ելնելով անհրաժեշտությունից

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Արաքսավան համայնքի 2016 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

11.01.02.51 /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ գործառական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 272300 /երկու հարյուր յոթանասուներկու հազար երեք հարյուր/ դրամ և հատկացնել

10.07.01.54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ գործառական դասակարգման 4726 /հուղարկավորության նպաստներ բյուջեից/ հոդվածին 40000(/քառասուն հազար/ դրամ և նույն գործառական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին 130000 /մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ:

08.02.04.51 /մշակութային միջոցառումների իրականացում/ գործառական դասակարգման 4269 / հատուկ նպատակային այլ նյութեր / հոդվածին 102300 / մեկ հարյուր երկու հազար երեք հարյուր/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ի. ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

4. ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

5. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 24.11.2016 թ. թիվ 19 որոշման

2017թ. ԱՐԱՔՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ /
Համայնքի ղեկավար		182 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	125 000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	123 000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	116 000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հարկահավաք	1	102 000
Օպերատոր	1	100 000
Խմելու ջրի պոմպակայանի հսկիչ	1	75 000
Հավաքարար	1	75 000
Ծառայողական ավտոմեքենայի վարորդ	1	80 000
Աղբատար մեքենայի վարորդ /պայմանագրային/	1	75 000
ԸՆԴԱՄԵՆԸ	9	1053000

Համայնքի ղեկավար Ա. Թադևոսյան

Հավելված

Արաքսավան համայնքի ավագանու 24.11.2016 թվականի թիվ 20 որոշման

Արաքսավան համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար----------7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------15000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------25000 դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------25 000 դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------50 000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------1500 դրամ,

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն----------1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է---------2500 դրամ:
1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0,5 գործակցի կիրառմամբ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------1500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------11000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------15000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում---------- 21000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------30000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------50000 դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------1500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------11000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------15000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------21000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------30000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում----------50000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 150 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ----------150 000դրամ.
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է---30 000դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-----2000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------6000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------11000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------16000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------21000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-----35000 դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-----1000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------2000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------3000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------5000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար----------10000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-----16000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ ----------50 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------50 000դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝---------- 300.000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝---------- 1 000 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ----------500 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝----------150 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար----------2000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար---------- ----------3500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար---------- 1000 դրամ.

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր

քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է---------- ----------1000դրամ:
Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է---------- 50 000դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է---------- ----------3000 դրամ:

Համայնքի տարածքում տեղական վճարներ սահմանել՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ---------- ----------1000 դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել ---------- ----------2000 դրամ:

3.Շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ գյուղապետարանի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ------ ---------- 5 000 դրամ:

4. Աղբահանության դիմաց յուրաքանչյուր բնակչից ամսական 10 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ